աչխարհաբառ լեզուով, թող կարդան. նոյնպէս կայ և Տաճկահայոց բարբառով։

Բայց ափսոս չէ մեր գրաբառ լեզուն, և նրանով գրուած սքանչելի աղօթքներն, որովք մարդ խնկապէս Աստուծոյ հետ խօսում. կարդա՛ ժամագրքի միջի բոլոր աղօթքներն ուշադրութեամբ, և տես, թէ ինչ հոգի կայ մէջերին. կարդա՛ նոյնպէս և ձաշոցի և Մաշտոցի մէջ եղած աղօթքներն՝ մանաւանդ Խորհրդատետրի մէջ եղած պատարագի աղօթքներն. կարդա՛ նմանապէս Գրիգոր Նարեկացու Աստուածախօսութեան սքանչելի աղօթքներն, որք զարմացրել են Եւրոպացի հայագէտ պիտանականներին այնքա՛, մինչև մեր գրաբառ Աստուածաշնչի գրուածքը անուանել «Թագուհի ամենայն թարգմանութեանց»։

Բ. Բողոքում են թէ՝ ժամերգութիւնը երկար է, յիշելով Քրիստոսի խօսքերը, թէ «պատճառանօք երկարին զաղօթս». ուստի և պահանջում են, որ այնքան շարականները՝ մանաւանդ Ներսէս Շնորհալւոյ երգերի, և տեղի և մեղեդիի փոխարէն կենդանի բարբառով քարոզ խօսէին ժողովրդեանը։ Մոռանում են Քրիստոսի միւս պատուէրը, թէ «Յամենայն ժամ կացէք յաղօթս, զի մի անկանիցիք ի փորձութիւն»։ Եւ այս երկար ժամերգութիւնն ինչ է, եթէ ոչ՝ գոհութիւն և փառաբանութիւն Աստուծոյ՝ տուած բարութեանց համար։

Յիրաւի քարոզը չատ հարկաւոր է մեր ժողովրդեանը՝ գոնէ Տէրունական օրերին, որ միշտ մօտ մնան Աստուծոյ՝ սրտով և հոգւով, բայց և բայց թողնելու չէ աղօթքն ու ժամերգութիւնն, որ ինչպէս ասացի, օրհնութիւն, գոհութիւն և փառաբանութիւն են Աստուծոյ, նորա անհուն գթութեան և մարդասիրութեան համար, զի ըստ Առաքելոյն՝ «Աստուած այնչափ սիրեաց զմարդիկ, մինչեւ զՈրդին իւր Միածին ետ վասն փրկութեան մարդկան»։ Յովհաննու՝ Գ. 16։

Մեր հոգեւոր իշխանութիւնը աշխատում է քարոզիչներ (վարպապետ, քահանայ) պատրաստել։

Գ. Բողոքում են նեստորի նման, թէ Հայոց եկեղեցին ին-